ԱՆՑ Է ԿԱՑՎԵԼՈՒ ՎՈԼԵՅԲՈԼԻ՝ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅԱՆ ԳԱՎԱԹԻ ՄՐՑԱՇԱՐ

29.03.2017 14:54

Հարգելի փաստաբաններ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը տեղեկացնում է, որ այս տարի նախատեսվում է կազմակերպել վոլեյբոլի 2017 թվականի Փաստաբանների առաջնության գավաթի մրցաշար:
Տեղեկացնում ենք, որ վոլեյբոլի մրցաշարը անց է կացվելու 2017թ. ապրիլի 8-ին (շաբաթ) առավոտյան ժամը 9 անց 30-ից «Խուլերի միավորման մարզամշակութային պալատում» (ք. Երևան, Եզնիկ Կողբացի փող., 69 շենք):
Գրանցման թիմային և անհատական հայտերը կարող եք ուղարկել info@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին կամ զանգահարել 600-701, 600-702 հեռախոսահամարներով և գրանցվել մինչև 2017թ. ապրիլի 6-ը, ժամը 18:00-ն ներառյալ: Գրանցման հայտում պետք է նշել Ձեր անունը, ազգանունը, փաստաբանական գործունեության արտոնագրի համարը, ինչպես նաև բջջային հեռախոսահամարը, իսկ թիմային հայտ ներկայացնելու դեպքում նաև թիմի անունը և թիմը ներկայացնող փաստաբանական կազմակերպության հեռախոսահամարը:

ՀՀ փաստաբանների պալատի
մարզամշակութային ակումբի համակարգող՝
Վրեժ Խաչիկյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })